ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵՎ ՌՈՒՍ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱՏԵՂ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

2008 թ. փետրվարի 5-6-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Հայ Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջև 2001 թվականին սկսված համատեղ քննարկումների երկրորդ հանդիպումը՝ նվիրված «Մարդու իրավունքներ. բարոյականություն և ավանդական արժեքներ» թեմային:

Ստորև ներկայացվում է հանդիպման համատեղ հաղորդագրությունը:

Հաղորդագրություն
Հայ Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջև համատեղ քննարկումների երկրորդ հանդիպման

Սուրբ Էջմիածին

2008 թ. փետրվարի 5-6-ը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Հայ Առաքելական և Ռուս Ուղղափառ Եկեղեցիների միջև համատեղ քննարկումների երկրորդ հանդիպումը, որը նվիրված էր «Մարդու իրավունքներ. բարոյականություն և ավանդական արժեքներ» թեմային:

Համատեղ քննարկումներն սկսվել են 2001 թվականին երկու Եկեղեցիների գահակալների՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Մոսկվայի և Համայն Ռուսիո Ալեքսի Բ Պատրիարքի նախաձեռնությամբ և օրհնությամբ՝ քննելու համար աստվածաբանական, եկեղեցական և հասարակական կյանքին վերաբերող առկա խնդիրներ: Առաջին հանդիպմանը, որ տեղի էր ունեցել 2001 թ. փետրվարի 13-15-ը Սուրբ Էջմիածնում, քննարկվել էին հասարակական նշանակություն ունեցող ժամանակակից խնդիրներ, որոնք արտացոլված են Ռուս Ուղղափառ Եկեղեցու սոցիալական կոնցեպցիայի հիմունքներում:

Հանդիպման թեմայով ներկայացվեցին չորս զեկուցումներ

- «Մարդու իրավունքները քրիստոնեական տեսանկյունից. ժամանակակից մարտահրավերներ» - Տ. Հովակիմ վրդ. Մանուկյան,
- «Աստվածաբանական մոտեցում մարդու իրավունքների նկատմամբ» - Հայր Գեորգի Ռյաբիխ,
- «Մարդու իրավունքներ. աստվածաբանությո՞ւն, գաղափարախոսությո՞ւն, թե՞ քաղաքական տեխնոլոգիա» - Իգումեն Կիրիլ Գովոռուն,
- «Անկում դեպի վեր» - Արա Գալոյան: